ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № «ԲԷՑ-ԲՄԱՇՁԲ-18/02»

ք.Երևան «22» մարտի 2018 թ.

«Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲ ընկերությունը, ի դեմս գլխավոր տնօրեն Ռ. Խաչատրյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու) մի կողմից, և «Վոլիոս» ՓԲ ընկերությունը, ի դեմս ընկերության տնօրեն Ա. Հովհաննիսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, կնքեցին Պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Պայմանագրի Տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով սահմանված (N 1 Հավելված)՝ «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության էլեկտրահաղորդման գծերի հանութագրման և բազային երկրատեղեկատվական համակարգի պահանջներին համապատասխան քարտեզագրական հիմքի ստեղծման և ներդրման Աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ Աշխատանք):

1.2 Աշխատանքը կատարվում է Պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե կատարվել է Պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք.

ա) Չընդունել Աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Աշխատանքը Պայմանագրին համապատասխանող Աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի ինչպես նաև 5.2 կետով նախատեսված տույժը,

բ) Հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Աշխատանքի համար վճարված գումարը:

2.1.3 Միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված Աշխատանքը չի համապատասխանում Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը, իսկ

Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 5.4 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև Պայմանագրի 5.4 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տույժը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված Աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պայմանագրի N 1 հավելվածում նշված յուրաքանչյուր ենթակետով նախատեսված Աշխատանքի ավարտից հետո Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով Աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն Պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող Աշխատանքային օրվանից հաշված 10 (տասը) Աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված Աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում Պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և Պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե Պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված Աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված Աշխատանքը համարվում է ընդունված և Պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող Աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի գինը կազմում է 141.000.000 (մեկ հարյուր քառասունմեկ միլիոն) ՀՀ դրամ, որից՝ ԱԱՀ-ն կազմում է 23.500.000 (քսաներեք միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված Աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով նախատեսված (Հավելված N 2):

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Աշխատանքի կատարման՝ Պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձել տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տույժը հաշվարկվում և հաշվանցվում է Աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4 Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Կատարողն իրավունք ունի Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկել տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.5 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.6 Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց Պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն Պայմանագրով և Պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների Աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ Պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով Պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.5 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել Աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան Պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.6 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.7 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.8 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.9 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.10 Պայմանագիրը կազմված է **13** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

7.11 Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ	«Վոլիոս» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան Անդրանիկի 1	Հասցեն՝ ք. Երևան, Գյուլիքևխվյան 23-43
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ «Մալաթիա» մ/ճ	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150001172630300	Հ/Հ 11500906906969
ՀՎՀՀ 01522459	ՀՎՀՀ 00902375
_____ Ղ.ԽԱՉԱՏՐՅԱՆ	_____ Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
(ստորագրություն)	(ստորագրություն)

Հավելված N 1
« 22 » Դեկտեմբեր 2018 թ. կնքված
ԲԷՑ-ԲՄԱՇՁԲ-18/02 ծածկագրով Պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Աշխատանքի ընդհանուր անվանումը			Չափման միավորը	քանակը	Աշխատանքի հատկանիշը	Ընդհանուր չափման միավորը	Ընդհանուր քանակը
«Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության էլեկտրահաղորդման գծերի հանութագրման և բազային երկրատեղեկատվական համակարգի պահանջներին համապատասխան քարտեզագրական հիմքի ստեղծման և ներդրման Աշխատանքներ **(Չափաբաժինը՝ 1)**	1.1	Գոյություն ունեցող քարտեզների, փաստաթղթերի, հավաքագրում և ուսումնասիրում	Հատ	1	Հավաքագրել գոյություն ունեցող կադաստրային տեղակագրական քարտեզները տարբեր մասշտաբների /1:2000, 1:5000, 1:10 000, 1:25 000/ քարտեզագրական նյութերը /հանութագրման/ (նախատեսվում է նաև փաստացի գնում), հավաքագրել վերջին տարիներին կատարած օդալուսանկարչական հանութագրման նյութերը (նախատեսվում է նաև փաստացի գնում), վերհանել վերջին տարիներին ՀՀ կառավարության և շահառու նախարարության կամ կոմիտեի որոշումները, մշակել դաշտային Աշխատանքների կատարման ծրագիրը և իրականացման հերթականությունը:	Դրամ	1
	1.2	Էլեկտրահաղորդման գծերի և ենթակառուցվածքի տվյալների բազայի, տեքստային դասակարգչի ստեղծում	հատ	1	Դասակարգչի ստեղծման նպատակն է ապահովել ավտոմատացված համակարգում քարտեզագրական օբյեկտների վերաբերյալ պայմանական նշանների և տեքստային տեղեկատվության նույնականացումն ու գործածումը: Դասակարգիչը հանդիսանում է տեխնոլոգիական ուղեցույց և սահմանում է ընդհանուր պահանջներ թվային քարտեզագրական տեղեկատվության դասակարգման, ծածկագրման, քարտեզագրական օբյեկտների թվային նկարագրման, բովանդակության կառուցվածքի, դրանք ավտոմատացված համակարգերում տարբեր մասշտաբների քարտեզներում և հատակագծերում օգտագործելու համար: Դասակարգիչը՝ տեղանքի քարտեզագրական օբյեկտների		

					ցանկն է իրենց հատկանիշներով, որոնք բնութագրում են քարտեզների և հատակագծերի վրա արտացոլված տեղանքի օբյեկտները: Տեքստային բնութագիրն իրենից ներկայացնում է տեղեկություններ օբյեկտի ֆունկցիոնալ, տեխնիկական կամ բնական հատկանիշների մասին: Քարտեզագրական օբյեկտը տեղանքի համապատասխան քարտեզագրական օբյեկտի գրաֆիկական պատկերն է քարտեզի կամ հատակագծի վրա:		
	1.3	Էլեկտրահաղորդման գծերի սպասարկման գոտում առկա տեղանքի բարձունքային մոդելի հանութագրման Աշխատանքներ ռելիեֆի համար	Գծ. կմ	494,7	Պետք է հանութագրել էլեկտրահաղորդման գծի սպասարկման գոտում ռելիեֆի բնորոշ կետերի անհրաժեշտ քանակության, այնուհետև հավաքագրված կետերը ծրագրային միջոցների օգնությամբ մշակել և ստեղծել տեղանքի բարձունքային մոդելը:		
	1.4	Էլեկտրահաղորդման գծերի հենարանների հանութագրման Աշխատանքներ	հատ	1596	Իրականացնել հանութագրման Աշխատանքներ՝ • որոշել տեղանքի տարածական դիրքը, • չափագրել հենարանների հարաբերական բարձրությունը:		
	1.5	Ենթակայանի տարածքի սահմանի հանութագրման Աշխատանքներ	հատ	16	Հանութագրել ենթակայանի տարածքի արտաքին սահմանը: Հանութագրել շրջադարձային կետերը:		
	1.6	10 կՎ հողմաէլեկտրակայանի տարածքի սահմանի հանութագրման և ենթակայանի	հատ	1	Հանութագրել 10 կՎ հողմաէլեկտրակայանի տարածքի արտաքին սահմանը: Հանութագրել շրջադարձային կետերը: Կազմել հողմաէլեկտրակայանի տարածքում գտնվող ենթակայանի ընդլայնման նախագիծը:		

	ընդլայնման նախագծի կազմման Աշխատանքներ			
1.7	Էլեկտրահաղորդման գծերի հենարանների տեխնիկական վիճակի մասին եզրակացության տրամադրում	հատ	5558	Էլեկտրահաղորդման գծերի հենարանների տեխնիկական վիճակի հսկման՝ մասնագիտական զննության գործառույթներ:
1.8	Էլեկտրահաղորդման գծերի հենարանների լուսանկարների կատալոգների ստեղծում	հատ	1596	Հենարանների լուսանկարահանման Աշխատանքներ: Այն նախատեսվում է իրականացնել ինչպես լուսանկարչական ապարատի միջոցով, այնպես էլ անօդաչու սարքի միջոցով:
1.9	Հանութագրման արդյունքում ստացված էլեկտրահաղորդման գծերի և հենարանների թվայնացում	հատ	1596	Հանութագրված նյութերը գրասենյակային պայմաններում մշակել, թվայնացնել և ստեղծել բազային երկրատեղեկատվական համակարգի համար պիտանի քարտեզագրական նյութ: Քարտեզագրական հիմքի ստեղծումը անհրաժեշտ է իրականացնել WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) կոորդինատային համակարգում: Հանութագրված և թվայնացված քարտեզագրական նյութը պետք է բավարարի «Հայաստանի Հանրապետության երկրատեղեկատվական համակարգի ստեղծման և վարման հայեցակարգը հաստատելու մասին» N 197-Ն որոշման քաղաքային համայնքների և (կամ) առանձին տարածքների (քաղաքներ, քաղաքատիպ ավաններ և այլն) համար՝ երկրատեղեկատվական համակարգի ստեղծման պահանջներին:
1.10	Երկրատեղեկատվական համակարգի համար առկա	հատ	1596	Էլեկտրահաղորդման գծերի, հենարանների, ենթակայանների տվյալների հավաքագրում (լարումը, տեսակը, հասցեն և այլն) և տվյալների բազայի ստեղծման

		տվյալների հավաքագրում և ներմուծում տվյալների բազա			Աշխատանքներ: Երկրատեղեկատվական համակարգի տեղեկատվական բանկը պարունակում է գրաֆիկական /քարտեզագրական/ և ատրիբուտային տվյալներ:		
	1.11	էլեկտրահաղորդման գծերի, ենթակայանների և հենարանների գեոպորտալի ստեղծման Աշխատանքներ	լրակազմ	1	Թվայնացված նյութը իր տվյալների բազայով տեղադրել օնլայն ծրագրային միջավայրում՝ գեոպորտալում:		

Այլ պայմաններ

Աշխատանքների կատարման ժամկետ

Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 90 օրացուցային օրվա ընթացքում

Աշխատանքների կատարման վայրը	**ՀՀ տարածք**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան Անդրանիկի 1
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ «Մալաթիա» մ/ճ
Հ/Հ 11500001172630300
ՀՎՀՀ 01522459

_____ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ

«Վոլիոս» ՓԲԸ
Հասցեն՝ ք. Երևան, Գյուլիքևխվյան 23-43
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 11500906906969
ՀՎՀՀ 00902375

_____ Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
(ստորագրություն)

Հավելված N 2
« 22 » մարտի 20 18 թ. կնքված
ԲԷՑ-ԲՄԱՇՁԲ-18/02 *ծածկագրով Պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

1.	Պայմանագրի 4.1 կետով սահմանված գնի 40%-ը, որպես կանխավճար Պատվիրատուն փոխանցում է Կատարողին, Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 5 Աշխատանքային օրվա ընթացքում
2.	Պայմանագրի գնի մնացած 60%-ը՝ փոխանցվում է Կատարողին մաս-մաս՝ Պայմանագրի N 1 հավելվածում նշված յուրաքանչյուր ենթակետով նախատեսված Աշխատանքի ավարտից հետո Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ հանձնման-ընդունման արձանագրության երկկողմանի ստորագրվելուց հաշված 5 Աշխատանքային օրվա ընթացքում

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան Անդրանիկի 1
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ «Մալաթիա» մ/ճ
Հ/Հ 1150001172630300
ՀՎՀՀ 01522459

_____ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ

«Վոլիոս» ՓԲԸ
Հասցեն՝ ք. Երևան, Գյուլիքևխվյան 23-43
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 11500906906969
ՀՎՀՀ 00902375

_____ Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
(ստորագրություն)